

ԲԱՆԱԿԸ ԻՐ ԴԻՐՔԵՐԸ ԱՄՐԱՅՈՒՑ «ԺԱԼԻԼ» ԳԱՂԹԱԿԱՅԱՆԻՆ ՇՈՒՐՁ

Լիբանանեան բանակը երէկ ամբողջական զբաղեցրեց «Ժալիլ» գաղթականացիները շրջափակելու գործը: Արդարեւ գաղթականացի շրջափակող բանակային ուժերուն միացաւ քոմանտոններու գումարտակ մը եւ զրահամեքենաներ: Բանակը նաեւ երկու նոր անցարգել զետեղեց գաղթականացիները մերձակայ Պալատիկէի հարակից մուտքին, գլխաւոր մայրուղիին երկու ուղղութիւններուն վրայ: Բանակային ուժերը նաեւ նոր դիրքեր գրաւեցին գաղթականացի շրջափակման մուտքերուն վրայ՝ խտացնելով երթ-թեւեկողներու ինքնուրոյն ստուգումը եւ ինքնաշարժներու խուզարկումը:

Գաղթականացի ժողովրդային յանձնախումբի պատասխանատու Մահմուտ Ուաբէտ յայտարարեց, որ գաղթականացի շրջափակումը չէ, իսկ բանակին միջոցառումները բնական են, նկատի առած գաղթականացիներու պատահածը: «Հոս ապահովական կողմերը չկան եւ մենք դէմ ենք այդ երեւոյթին», ըսաւ Ուաբէտ՝ հաստատելով, որ լիբանանեան բանակը արար քաղաքացիները պիտի գործակցին լուծելու համար այս հարցը: Ան նաեւ հաստատեց, որ անընդունելի են ապահովութեան խախտումները եւ նման դէպքեր պիտի չկրկնուին:

ԻՍՐԱՅԷԼ ԻՆՔ ՊԵՏՔ Է ԴԱՏՈՒԻ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՊԱՐԴՈՒԹԻ

Յարթի ղեկավարներէն Մարուան Պարդութի, որուն դատարանը սկսաւ երէկ, Թէյ Ալիի մէկ ատենին մէջ, ոտքի կանգնելով յայտարարեց, թէ իսրայէլեան ատենարանը իրաւասութիւն չունի պիտի դատելու մարդասպանութեան ամբաստանութեան համար: Թէյ Ալիի դատարանին մէջ իրարանցում մը ծայր տուաւ, երբ Պարդութի ընտանիքին անդամներն ու պաղեստինցի պինեալներու կողմէ սպաննուած իսրայէլացիներու ազգականներ բախում ունեցան իրարու հետ: Ետնադամ ատենարան կարդաց Պարդութի դէմ ուղղուած ամբաստանագիրը, որ պաղեստինցի ղեկավարը կ'ամբաստանէ 26 իսրայէլացիներու սպանութեամբ, կամ սպանութեան փորձով: «Այս ատենարան չէմ ճանչնար: Ասիկա գրաւող ուժի մը դատարանն է», ըսաւ Պարդութի, որ շրջափակուած էր դատարանի ոստիկանութեան հսկողութեան տակ:



Պարդութի՝ ձեռնակապով, իսրայէլեան ատենարանի դիմաց կը դատապարտէ սինական պետութիւնը

Պարդութի, որ ոչ օրինական կը նկատէ դատարանը, պաշտպան փաստաբաններէն պահանջեց չնեղականալ նիստին, որպէսզի օրինական բնոյթ չստանայ դատարանը: Ան մերժեց նաեւ իսրայէլի կողմէ նշանակուած փաստաբան մը: Պարդութի դատարանին մէջ յայտարարեց, որ իսրայէլ պէտք է դատուի: Ան մերժեց նաեւ ընդունիլ ամբաստանագիրէն օրինակ մը: «Ես ապատեմաբար մըն էմ եւ երեսփոխան մը, որ բնորոշ է պաղեստինցի ժողովուրդին կողմէ», աւելցուց Պարդութի: Պարդութի պաղեստինցի ամենէն բարձրաստիճան պաշտօնատարն է, որ կը դատուի իսրայէլի մէջ: Ան կը նկատուի պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի հասակակիցը: Պարդութի ժողովրդականութիւնը բարձրացաւ ձեռնապահուած ժողովուրդի մէջ:

Իսրայէլի արտաքին գործոց նախարարութեան բանբերը ըսաւ, որ Թէյ Ալիի դատարանը իրաւասութիւն ունի դատելու Պարդութին, որովհետեւ ոճիրները գործուած են իսրայէլի մէջ եւ իսրայէլացիներուն դէմ:

ԲԱՆՈՒՍ ԿԱԶԱՅԻ ՄԷՋ

Իսրայէլեան լրատուական աղբիւրներ հարողեցին, որ քանի մը իսրայէլացիներ վիրաւորուած են իսրայէլի մէջ:

ԱՆԳԱՐԱ ՏԱԿԱԻՆ ՇԱՏ ՊԵՏՔ Է ՄՊԱՍԷ

Երոսկան Յանձնաժողովը երէկ անգամ մը եւս յստակ դարձուց, որ Անգարա տակաւին շատ պէտք է սպասէ, որպէսզի Երոսկան Միութիւնը թուական մը ճշդէ՛ թուրքիոյ անդամակցութեան բանակցութիւններուն սկսելու համար:

Երոսկան Յանձնաժողովի յանձնակատար Կունքըր Վերհէօլըն, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Շիւքրի Սինա կիւրէլի հետ իր տեսակցութենէն ետք յայտարարեց, որ Անգարա պիտի է ցոյց տայ, որ յառաջդիմութիւն արձանագրած է բարեկարգումներուն մէջ:

Շար.ը՝ էջ 10

ՃՈՐՃ ՊՈՒՇ ՄԱԿԻ ՄԷՋ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՍԱՏՏԱՄ ՀԻՒՍԷՅՆԻ ԶԻՆՔԵՐՈՒ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՆՈՆՑ ՍՊԱՌՆԱԼԻՔԻՆ ՓԱՍՏԵՐԸ

Այն պահուն, երբ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ կը յայտնէր, որ ՄԱԿի մէջ պիտի ներկայացնէ մանրամասնութիւնները իրաքի զէնքերու ծրագրերուն եւ անոնց սպառնալիքին, Եգիպտոսի մէջ, Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա յայտարարեց, որ արաբները իրաքէն կը պահանջեն ՄԱԿի հետ գործակցութեամբ, վերընդունիլ զէնքի քննիչները:

Պուշ, որ կը քննադատուի իրաքի դէմ յարձակումի ծրագրերը փաստերով հիմնաւորած չլլալուն համար, դիտել տուաւ, որ բոլոր փաստերը պիտի ներկայացնէ Սեպտեմբեր 12ին արտասանելիք ճառով: Ան աւելցուց, որ յառաջիկայ շաբթուան ընթացքին, խորհրդակցութիւններ պիտի ունենայ Բրիտանիոյ, Ռուսիոյ, Չինաստանի, Տրանսսիւրի եւ Քանադայի ղեկավարներուն հետ: Եւ մինչ անոր խորհրդատուները կը յայտնեն, որ ան որոշում չէ տուած զինուորական գործողութեան մը ձեռնարկելու մասին, Պուշ հանդիպում ունեցաւ Քոնկրէսի անդամներու հետ, որոնց ըսաւ, թէ իրաքի ներկայացուցած սպառնալիքը անտեսելու ոչ չի ընել ընտրանք մը չէ: Պուշ խոստարեց նաեւ, որ իրաքի դէմ յարձակումի մը մասին հաւանութիւնը պիտի առնէ Բոնկրէսին:

Պուշ աւելցուց, որ ՄԱԿի մէջ արտասանելիք ճառով ներկայներուն պիտի յիշեցնէ, թէ անցնող տասընամէկ տարիներուն Սատտամ Հիւսէյն ինչպէս յաջողած է խախտել Ապահովութեան Խորհուրդի որոշումներն ու հաւաքական քանդումի զէնքերու պատրաստութիւնը արգիւտող համաձայնութիւնները: Այս իրողութիւնը պիտի ներկայացնէ աշխարհին՝ ցոյց տալու համար, թէ Սատտամ Հիւսէյն մարտահրաւէր կ'ուղղէ ու կը սպառնայ ամբողջ աշխարհին:

Պուշ յայտարարեց նաեւ, որ իրաքի վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները պիտի բաժնակցի Բոնկրէսին հետ: Պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտի հետ դռնփակ հանդիպում մը ունեցած ծերակուտականներ յայտնեցին, որ նախարարը որեւէ նորութիւն չէ փոխանցեց իրաքի հաւաքական քանդումի ենթադրեալ զէնքերուն մասին: Ծերակուտականները դժգոհ էին, որովհետեւ Պուշ եւ անոր կառավարութիւնը մտաւոր մէջ կը պահեն Բոնկրէսը:

Ամերիկեան Սի. Պի. Էս. պատկերասփիւռի կայանին կողմէ պատրաստուած յայտագիր մը լուսարձակի տակ առնելով Պուշի կառավարութեան կեցուածքը Սատտամի մասին, հաղորդեց, որ ըստ հաւաստի աղբիւրներու, Սատտամը տապալելու ծրագիրը եւ որոշումը միայն անցնող քանի մը ամսուան չ'առնչուիր: Կայանին համաձայն, Սեպտեմբեր 11ի առաջին գործողութեան լուրը առնելով Ռամսֆելտը յայտարարած է, թէ Սատտամ Հիւսէյն անյայտ պէտք է տապալի: Ռամսֆելտը ըսած է, թէ արշաւը պէտք է լլալայ ո՛չ միայն Ուսամա Պըն Լատէնի դէմ, այլեւ՝ անոր առնչակից եղող եւ չեղող կողմերու դէմ:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու նախկին ընդհանուր դատաբան Ռամսի Քլարք, որ կը մերժէ իրաքի դէմ յարձակումը, դիտել տուաւ, որ Ուաշինկթըն օրինական որեւէ պատճառ չունի յարձակելու: «Իրաքը սպառնալիք նկատելը ամբողջութեամբ շինծու է», ըսաւ Քլարք՝ շեշտելով, որ այդ յայտարարութիւնը կատարողներն անգամ չեն հաւատար իրենց ըսածին: Քլարքը աւելցուց, որ Պուշ պիտի դառնայ ամենէն վտանգաւոր սխալը գործած ամերիկացի նախագահը, եթէ իրաքի դէմ պատերազմ յայտարարէ:

Իրաքի դէմ յարձակումի մը ծրագիրը քննադատեց նաեւ նախկին նախագահ Ճիմի Բարքը՝ դիտել տալով, որ Ուաշինկթընի մէջ յարձակողական քաղաքականութիւնը քաջալերող ծայրեր Միացեալ Նահանգները կը հեռացնեն մարդկային իրաւանց հարցերու պաշտպանի առաջնորդի դիրքէն:

Վիդաւիստամի մայրաքաղաք Քապուլի մէջ երէկ ակամուտ ինքնաշարժի մը պայթումը իսրայէլեան 15 գոնի 20 վիրաւոր: Պաշտօնակատարները անգամ չ'արեւելեցին իրենց ամբաստանութիւնները ուղղելու «Քայիտա»-ի եւ Թալեպանի գանդը պայթումի պատասխանատուները համարելով:

ՈՒԹԵՂ ՊԱՅԹՈՒՄ ՍԸ ՔԱՊՈՒԼԻ ՄԷՋ

ՔԱՐԶԱՅ ՓՐԿՈՒԵՅԱԿ ՄԱՅԱՓՈՐՁԷ ՍԸ



Վիրաւոր պատանի մը կը փոխադրուի հիւանդանոց

Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլի մէջ երէկ ակամուտ ինքնաշարժի մը պայթումը իսրայէլեան 15 գոնի 20 վիրաւոր: Պաշտօնակատարները անգամ չ'արեւելեցին իրենց ամբաստանութիւնները ուղղելու «Քայիտա»-ի եւ Թալեպանի գանդը պայթումի պատասխանատուները համարելով:

Ալգանտեսներ ըսին, որ նախ պատահած է փոքր պայթում մը, ապա հին ինքնաշարժ մը պայթած է՝ մահ եւ արեւ սփռելով: Անոնք նաեւ ըսին, որ հազարաւոր անփայտներ խոյս տուած են Քապուլի կեդրոնա-

հասնելէն ի վեր: Անիկա նաեւ կը պատահի 11 Սեպտեմբերի յարձակումին առաջին տարեդարձէն շաբաթ մը առաջ: Անցնող ամիսներուն Քապուլի մէջ պատահած էին փոքր պայթում

BACK TO SCHOOL "5"
ՎԵՐԱՄՈՒՏԻ ՅՈՒՑԱՆԱԼԴԷՍ "5"
4ԷՆ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002
Ամէն օր կ'սորի, ետք ժամը 4:00ԷՆ կ'սկսուի 10:00
Յուշահանդէս կ'ընդգրկէ
• Ուսանող պատանիներ
• Կրթական հաստատութեանց կազմաճեմք
• Արդիական արհեստից սարքաւորումներ
Expo Beirut - Ain Meraysse
Հեռ.՝ 01 - 361040 - 01 - 363710

ՃԱՇԱՐԱՆ ՈՒՄՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ
(ժողով էլ Պաղոթ, Պապիւն դեպի Պրումանայի ձամբուն վրայ)
ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԴ, ԸՆԴՈՒՄՆԵՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՒ ԸՆՏԱՆԵՎԱՆ ՍԹՆՈՒՈՐՏ
• Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադրած ձաշեր, սակ մէկ անձի **8\$**: Խժիչքը՝ ըստ ապսպրումների:
• Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:
• Ամէն Շաբաթ երեկոները յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուիչի:
• Փոքրերու յատուկ խաղաղային:
• Կը ստանձնենք միութեանակա եւ անձնական խրախուսանքներ յարմար գիներով:
ԾԱՆՕԹ. Յատուկ ձաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օդի, գարնջուր եւ զովագոցի:
Մէկ անձի համար միայն 17\$:
Հեռահայց. 04 - 808707 եւ 03 - 360667:

ՆԱԽԱԳԱԿ ԼԱՇՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երկ կայտարարեց, թե պետք չէ ընդունել, որ 11 Սեպտեմբերի ահաբեկչական արարքը օգտագործողի իրեն պատճառաբանություն, որուն հիմամբ Բուրայի իր պայմանները եւ քաղաքականությունը բանեցնէ ամբողջ աշխարհին մէջ եւ յատկապէս՝ արաբական երկիրներուն վրայ:

Նախագահ Լախուտ նկատել տուաւ, որ Պէյրուսի մէջ կայացած արաբական վեհաժողովը փաստօրէն արաբական հաշտութեան վեհաժողով էր, որ դուրս եկաւ կեցուածքներով, որոնք առաջին անգամ ըլլալով յայտարարութեան իբրեւ համագործակցութիւն, յառաջիկայ շրջանին աւելի եւս ամրապնդելու արաբական աշխարհին յարաբերութիւնները:

Միւս կողմէ, նախագահ Լախուտ երկ Պաապտայի մէջ ընդունեց բազմաթիւ անձնատուութիւններ, որոնց հետ քննարկումի հիմնական առարկայ դարձաւ ազգային երկխօսութեան հարցը քաղաքական պանապան դեկալարութիւններու կողմէ երկրին ներքին կացութիւնը իրականացնելու պահանջին լոյսին տակ:

Նախագահ Լախուտ ընդունեց հանրապետութեան միւլթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանին, որուն հետ քննարկեց քաղաքական ներկայ իրավիճակը:

Հանդիպումէն ետք Քապպանի յայտարարեց, որ նախագահ Լախուտի հետ քննարկած է ազգային կեանքին առնչուած հարցեր՝ դրուստելով լիբանանեան ազգային համախմբում ստեղծելու համար նախագահ Լախուտի ի գործ դրած ջանքերը, ինչպէս նաեւ անոր ճիգերը՝

ամրապնդելու համար ներքին ճակատը՝ կարենալ դիմադրելու համար թշնամի Բուրայի լի սիոնական վտանգներուն եւ ծրագիրներուն, որոնց թիրախն է ամբողջ արաբական աշխարհը:

Նախագահ Լախուտի այցելեց ժողովրդավարական Կուսակցութեան նախագահ, պետական նախարար Թալալ Արսլան՝ գլխաւորելով Կուսակցութեան քաղաքական գրասենեակէն պատուիրակութիւն մը: Քննարկութեան տեղական հարցեր, ինչպէս նախագահ Լախուտի հովանաւորած ազգային երկխօսութիւնը: Ներկայացուցաւ ժողովրդավարական Կուսակցութեան պատկերացումը այդ երկխօսութեան յաջողութեան հիմներուն մասին:

Քննարկումի առարկայ դարձան նաեւ տնտեսական, ընկերային եւ կրթական այլ հարցեր, շրջանային հարցեր եւ անոնց ձգած ազդեցութիւնները Լիբանանի վրայ:

Նախագահական պալատ այցելեց հանրօգուտ շինութեանց եւ փոխադրամիջոցի հարցերու նախարար Նեժիպ Միքաթի, որ նախագահ Լախուտի հետ քննարկեց իր նախարարութեան առնչուած հարցեր եւ լիբանանեան կարգ մը շրջաններուն մէջ գործադրուող բարգաւաճման ծրագիրներ, որոնց կիրարկման կամ գործադրութեան կը հսկէ նախագահ Լախուտ:

Պաապտայի հիւրերէն եղաւ Կրոսաշրջութեան նախարար Քարամ Քարամ, որ նախագահ Լախուտի ներկայացուց Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովի նախօրեակին այդ վե-

Շարք՝ էջ 10

ՀԱՐԻՐԻ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՍՐԲԱԳՐԵԼ ՈՐԵՒԷ ԽԱԽՏՈՒՄ



Հարիրի կ'ընդունի Ֆրանսիացիները

Ֆրիստոնեայ երեսփոխաններու խորհրդակցական հանդիպումը երէկ այցելեց վարչապետ Ռաֆիկ Հարիրիի եւ անոր յանձնեց անդրանիկ յայտարարութեան պատճէնը:

Երեսփոխան Ֆապալան Խոս Խուրի յայտարարեց, որ տեսակցութեան ընթացքին հանդիպումը վարչապետին ներկայացուցած է իր սկզբունքները եւ կեցուածքները, մանաւանդ ինչ կը վերաբերի քրիստոնեան եւ իսլամ կողմէն քաղաքական յայտարարութիւնները բանական դարձնելուն եւ անոնց հասարակաց գիծերուն մէկտեղումով՝ միացեալ կեցուածքներու բնութեազոյցումին:

Խոս Խուրի ըսաւ, որ նաեւ ընդգծած են անհրաժեշտութիւնը՝ ջնջելու մտավախութիւններու, վախի, ընկճուածութեան եւ իրաւազրկումի զգացումները բոլոր լիբանանցիներու հոգիներէն, եւ սրբազրկուած պետական կառոյցներէն ներս անհաւասարակչուածութիւնը:

Խ. Թ. Վ. պատկերասփիւռի կայանը փակելու վճիռին մասին՝ Խոս Խուրի նկատել տուաւ, որ անիկա վերջ-

նական չէ եւ կարելի է գայն վերատեսուցութեան ենթարկելու դիմում ներկայացնել պատկան դատական մարմիններուն: «Պէտք է յարգել հաստատութիւնները եւ ճիշդ չէ, որ ամէն դատական վճիռի փողոց իջնենք», ըսաւ ան:

Խոս Խուրի յայտարարեց, որ Հարիրի հաւաստած է, թէ պիտի աշխատի կատարեալ հաւասարակչութեան հաստատելու երկրէն ներս եւ սրբազրկուած ամէն խախտում: «Եթէ խախտում մը կայ, կը մաղթեմ, որ ունենալ լիբանանցի ուշադրութեան յանձնէ գայն, որպէսզի անոր սրբազրկութեան առաջամարտիկներէն ըլլամ», ըսած է Հարիրի:

Վարչապետ Հարիրի նաեւ ընդունեց արաբական հիմնարկի ընդհանուր տնօրէն ԱՏՄէտ Սալլուսը: Վարչապետ Հարիրի նաեւ ընդունեց Լիբանանի մէջ Սէնտական Արարիոյ դեսպան Ֆուատ Սատէք Մուլթիին, Թրիփոլիի առեւտրականներու միութեան պատուիրակութիւնը եւ Պէյրութի նաւահանգիստի ծրագիրներու կապալառուները:

Հ.Յ. Լ.Ե.Ս.

ՄԱՍՆԱԿՅՈՒՐ ԳՐԲԱՆԱԽԵՐԻՆ

Ախալքալաքի «Ռուբէն Տեր Միմասեան» վարժարանի «Եղիկ Գայեան» գրադարանի հիմնումին համար գրքահաւաքին մասնակցիլ փափաքողները կրնան դիմել ԼԵՍԻ կեդրոն, ամէն օր ժամը 6:30էն սկսեալ կամ հեռաձայնել՝

03 - 802774 թիւին:

«ԷՄ. ԹԻ. ՎԻ.»Ն ՓԱԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԴԷՄ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ

«Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանը փակելու դատական վճիռին դէմ երէկ բողոքի այիք մը բարձրացաւ լրատուական եւ քաղաքական շրջանակներէ ներս:

Մամլոյ սենտիքայի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ պօրակցութեան հաւաք մը, որուն ներկայ գտնուեցան յատուկ լրատուական լրատու միջոցներու եւ մամուլի ներկայացուցիչներ, ապա տասարեակի սենտիքաներու եւ աշխատատեղական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ մամլոյ եւ իմպրեսոներու սենտիքաներու նախագահներ՝ Մոհամէտ Պաապտայի եւ Մըլիքի Քարամ: Այս վերջինը յայտարարեց, որ մամուլի եւ լրատուական շրջանակներու հաստատութիւններու ներկայացուցիչները գումարած ժեռողով մը եւ սպառնացած են կատարել միօրեայ գործադուլ եւ պոլիցիոյ ենթարկել բոլոր պետական պաշտօնատարներու լուրերը եւ չհաղորդել պատկեր:

Քարամ նաեւ յայտարարեց, որ ժողովը որոշած է կազմել պատուիրակութիւն մը, որ տեսակցութիւններ պիտի ունենայ իշխանաւորներու հետ, եւ երկրորդ մը, որուն մաս կը կազմեն Պաապտայի եւ Փիեռ Տահէրի եւ ինք, տեսակցելու համար իշխանութեան պետներուն հետ:

Այս ընդարձակ ժողով-հաւաքէն առաջ գումարած էր այլ սեղմ ժողով մը, որուն Քարա-

մի. Պաապտայի եւ լրատուական միջոցներու ներկայացուցիչներու կողքին մասնակցեցան նախարար Մարուան Համատէ, երեսփոխան Պասէմ Սապրի եւ նախկին նախարար Միշէլ Մըմահա, ինչպէս նաեւ երեսփոխան Կապրիէլ Մըր, որ ժողովականներուն յայտնեց, թէ «Այ. Սի. Էն.» պատկերասփիւռի կայանը պիտի վերսկսի իր սփումները՝ օգտագործելով «Էմ. Թի. Վի.»ի արտադրութեամբ յայտագիրներ: Ան բացատրեց, որ «Այ. Սի. Էն.»ի սեփականատէր Հանրի Սֆէյր իրեն այս իմաստով առաջարկ ներկայացուցած է:

Մըր նաեւ յայտարարեց, որ իր կայանը փակելու դատական որոշումի բեկանման դիմում ներկայացուցած է եւ կապուտեց, որ այդ վճիռը քաղաքական դրդապատճառ ունէր:

Մամլոյ սենտիքայի նախագահ Մոհամէտ Պաապտայի կատարեց յայտարարութիւն մը, որուն մէջ ընդգծեց, թէ Լիբանան չի կրնար գոյատևել առանց պատուիրակութիւններու եւ պահանջեց բարեփոխել լրատուութեան եւ ընտրութեան օրէնքները, որովհետեւ անոնց տրամադրութիւններէն ոմանք խոտոր կը համեմատին կարծիքը սպասօրէն արտայայտելու իրա-

Շարք՝ էջ 10

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏ

Կառավարութիւնը երէկ գումարեց իր ընթացիկ նիստը, որուն ընթացքին շարունակեց 2003ի պետական պիւտճէի նախագիծի քննարկումը եւ վաւերացուց պայմանագրերով կարգ մը փոփոխութիւններ:

Պիտճէի նախագիծին տարբեր այլ կէտերուն մասին տակաւին պիտի կատարուին յստակացումներ, ինչ

Շարք՝ էջ 10

ԹՐԱՍԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ՎԱՐԺԱՐԱՆ

2002-2003 ՏԱՐԵՇՐՁԱՆ

ՎԵՐԱՍՈՒՏ

Տիրոջը կամքով 2002-2003 տարեշրջանը պիտի սկսի 30 Սեպտեմբեր 2002ին (նախակրթարան եւ մանկապարտէզ): Արձանագրութիւն՝ 2 Սեպտեմբեր 2002էն սկսեալ: Գրասենեակը բաց է առաւօտեան ժամը 9:00էն 1:00: ԵՆՆՕԹ.

Նպաստաւոր կրթաթոշակ: Մանկապատանեկան նոր գրադարան: Բարեգարդուած դասարաններ: Կրթական նախարարութեան կողմէ որոշուած ծրագրի գործադրութիւն:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄՏՔՈՎ ԹԵՐԱՎՃ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

«ՉՈՒՄԹԵՆՈՅ» ԿԵՂՈՐԱ

ՎԵՐԱՍՈՒՏ

2002-2003 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Արձանագրութիւնները կը շարունակուին, Սեպտեմբեր 10էն սկսեալ, առաւօտեան ժամը 9:00էն 12:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Վերամուտ՝ Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2002:

Կեդրոնը կը շարունակէ ընդունիլ հին եւ նոր աշակերտներ՝ երկսեռ մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ:

Կեդրոնը ունի աշխատանոցի դրութիւն եւ ինքնաշարժի սպասարկութիւն:

Կացէ՝ Խալիլ Պատաուի, նախկին Կեցազ վարժարան:

Ենաձայն՝ 01-446442
Ենապատճէն՝ 01-562373
E-mail: - ZVARTNOTZ@terra.net.lb

Ե. Մասնագիտացած դաստիարակութիւնը առաւել չափով արդիւնաւետ կ'ըլլայ, երբ մանուկները փոքր հասակին կեդրոն կը ներկայանան:

ՏԵՏՈՒԹԻՒՆ

ՇԱՆՈՒ ԿԱՍ ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

●Անթիլիաս, Սիմֆեան շէնքեր, 60 քառ մետր: Եճ. 03 - 310203:

ՇԱՆՈՒ ՅԱՐԿԱԲԱԾԻՆ

●Անթիլիաս, Սըզիերի սկիզբ: Ճամբորդութեան պատճառով: 160 քառ. մետր, 8րդ յարկ, գեղատեսիլ դիրք: Դիմել՝ հեռ. 01-267909:

STUDIO **Lantern**

●Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Եճ. 01-268866
Եւ 03-695399

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱՒԵՐ

ՏԻԿԻՆ ԱՍՏՈՒԿ ՉԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՒԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Սիրով կը հրաւիրեն ազգականներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

ՎԱՐԴԻՎԱՌԻ ԵՒ ՍԻՒՉԻԻ

Ս. Պաակի Խորհուրդից, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002էն, երեկոյեան ժամը 5:30ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ:

Խաչեղբայր՝ **ՎԱԶԳԵՆ ՉԱՍՊԵԱՆ**

Հարսնքոյր՝ **ՍՈՆԻԱ ՉԱՍՊԵԱՆ**

- Ներկայս ընդունիլ իբրեւ ածնական հրաւեր:
- Շնորհատրութիւն տեղւոյն վրայ:
- Ընդունելութիւն՝ ժամադրութեամբ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի

ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆՆԵՍ

ԵԼՈՅԹ ԿՈՒՆԵՆԱՅ ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ **ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻՆ**

(Դեկավարութեամբ՝ **ԽԱՉԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ**)

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 7 Սեպտեմբեր 2002, երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, «BURJ AL HAMAM» ձաշարանին մէջ, Պրումմանա:

Տոմսերը ստանալ Համազգայինի գրախանութն Պուրճ Համուտ, Տիւրքի Ճեքայն եւ OBELIX գրախանութն, Անթիլիաս:

ՎԵՐԱՍՈՒՏ

ՀԱՅ ԱՒԵՏ. ՇԱՄԼԵԱՆ ԹՎԹԻԿԵԱՆ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆ

ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏ

Եճ. 261749 - 240995
Ֆաքս 240996 Փոստարկը 80907
E Mail : aesssb@cyberia.net.lb

Ըայ Աւետարանական Ծամլեան Թաթիկեան երկրորդական վարժարանի հոգաբարձութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ 2002 - 2003 տարեշրջանի վերամուտին՝ վարժարանը կը վերաբանայ երկրորդական Գ. դասարանը (bacc., Life Science):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Արձանագրութիւն՝ սկսեալ Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2002էն:

Արձանագրութեան համար վարժարանի գրասենեակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթիէն Ուրբաթ՝ առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

ՎԵՐԱՍՈՒՄՆԵՐ

Վերաքննութեան կարօտ աշակերտներ պարտին ներկայանալ վարժարան, 11էն 13 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 9:00ին:

ՎԵՐԱՍՈՒՄՆԵՐ

ա. Պրեզիտ եւ երկրորդական Գ. կարգի աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի 16 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 8:00ին:

բ. Մնացեալ բոլոր կարգերու աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի 30 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 7:30ին:

●Այս առիթով Ըայ Աւետարանական Ծամլեան Թաթիկեան երկրորդական վարժարանի հոգաբարձութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ վարժարանի պրեզիտ դասարանի 18 աշակերտներն 16ը յաջողած են պրեզիտ կառավարական քննութեան (որոնցմէ մէկը՝ բարձր յիշատակութեամբ, իսկ երկուքը՝ յիշատակութեամբ):

Ջերմագին շնորհաւորութիւններ մեր աշակերտներուն, իրենց ընտանիքներուն եւ ուսուցչակազմին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ Կ'ԸՆԹԱՆԱՅ ՄԵԾ ԹԱՓՈՎ

Հ.Մ.Ը.Մ.Ի սկսուտական միջմասնաճիւղային բանակումին աշխատանքները երկրորդ օրն ըլլալով ընթացքի մէջ են: Մասնաճիւղերը գրեթէ ամբողջացուցած են իրենց ձեռնարկն աշխատանքները: Բանակումին երկրորդ օրը մասնաճիւղերը հետապնդող արշաւներ կազմակերպեցին ղեպի բանակավայրի շրջակայ վայրերը: Ատկէ վատ իւրաքանչիւր մասնաճիւղ պատրաստած էր իր ներքին յայտագիրները: Այսպէս, տեղի ունեցաւ սկսուտական գիտելիքներու փոխանցում, պատի թերթի պատրաստութիւն, ինչպէս նաեւ ներկայացուցան պանապան սկսուտական խաղեր:

5 Սեպտեմբերին բանակավայրին մէջ տեղի ունեցած ամենին յատկանշական էրեւոյթն էր ռատիոժամի սփռումը՝ իր հաճելի եւ դաստիարակչական բնոյթով: Մասնաճիւղերը իրենք պատրաստած էին ռատիոժամի յայտագիրները: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ. Պէրլուրի մասնաճիւղը ներկայացուց «Հայկական երաժշտութիւնը հնագոյն ժամանակաշրջաններէն մինչեւ 20րդ

դար» նիւթը, որուն ընթացքին տեղեկութիւններ փոխանցուցան տարբեր ժամանակաշրջաններու մէջ ապրած եւ երաժշտական տարբեր բնագաւառներու (դասական, գուսանական, աշուղական, ժողովրդային, եւայլն) մէջ իրենց ներդրումը ունեցած երախտաւորներու մասին: Պուրճ Համուտի մասնաճիւղը տեղեկութիւններ փոխանցեց Վիգէն Չաքարեանի, Նիկոլ Դումանի եւ Գէորգ Չաուրի մասին, որոնց անունով կոչուած էր մասնաճիւղի սկսուտական իւրաքանչիւր խմբակ եւ փաղանգ: Տեղեկութիւններ փոխանցուցան նաեւ այն կենդանիներուն մասին, որոնց անունով կը կոչուին խմբակները: Նաեւ տեղեկութիւններ տրուցան նախնական դարմանումի մասին:

Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի մասնաճիւղը հարցալոյց մը ունեցաւ շրջանային խմբակներուն հետ: Տեղեկութիւններ փոխանցուցան միջազգային մարզական կեանքին, ինչպէս նաեւ՝ հայկական մականուններու եւ ճաշերու մասին:

ԱՅՀԻԼ ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏ ՄԸ ՀԱՍՏԱՏԵՑ

«ԱՅՀԻԼ» ապահովագրութեան սնտուկին կազմակերպութեամբ նախանցեալ գիշեր Պիքֆայաի «Այն Տըրլը» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը, հովանաւորութեամբ երկրագործութեան նախարար Ալի Ապտալլայի: Գիշերային պաշտօնապէս յայտարարուեցաւ «ԱՅՀԻԼ»-ի կողմէ դպրոցականներու եւ համալսարանականներու համար հիմնուած նիւթական նպաստի ֆոնտ մը, որ կը վերաբերի միայն հայ համայնքի կալաններուն:

Ճաշկերոյթին ներկայ էին Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան, կաթողիկէ պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ Վարդան եպ. Աշգարեան, Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան (ՄԱՎԵՄ) նախագահ վեր. Փոլ Հայտոսեան, երեսփոխան Ճորճ Գասարճի, նախկին երեսփոխան Նուրիճան Տեմիրճեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիան, Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Միլիթարեան, ինչպէս նաեւ հայկական մշակութային, բարեփոխական, մարզական եւ այլ միութիւններու ու կուսակցութիւններու եւ «Պենքըրը» եւ «Անտնէթ» ապահովագրութեան սնտուկներու ներկայացուցիչներ:

«ԱՅՀԻԼ»-ի տնօրէնութեան խօսքը փոխանցեց Յասմիկ Նալպանտեան, որ շնորհակալութիւն յայտնեց նախարար Ապտալլայի, որ հովանաւորեց նշեալ ձեռնարկը, ինչպէս նաեւ շնորհակալութեան խօսք ուղղեց «Պենքըրը» եւ «Անտնէթ» ապահովագրութեան սնտուկներուն, որոնք օժանդակեցին «ԱՅՀԻԼ»-ի շեշտելով, որ ապահովագրութեան սնտուկներուն նպատակը քաղաքացիին ծառայութիւնն է:

Խօսք առաւ առողջապահական ապահովագրութեան սնտուկներու համադաշնակցութեան նախագահ Ղասսան Տաու, որ յայտնեց, թէ նման սնտուկներու նպատակը կուտ ծառայութիւնն է երբեք չի միտիր շահեր ապահովելու՝ նկատել տալով, որ Լիբանանի մէջ ապահովագրութեան սնտուկներու թիւը հասած է 60ի եւ կ'օժանդակէ աւելի քան 225 հազար քաղաքացիներու:

«Անտնէթ» ապահովագրական սնտուկի սնտուկ խօսք առաւ Ֆարիտ Քահուաժի, որ պատասխանեց ապահովագրութեան սնտուկներուն ուղղուած դատապարտումի ալիքին՝ դիտել տալով, որ ապահովագրութեան սեփական սնտուկները նոյն ծառայութիւնները ունին ինչպէս ազգային ապահովագրութեան սնտուկը, սակայն այս վերջինին օրէնքներուն չեն ենթարկուիր, այլ իրենց յատուկ օրէնքներու:

Խօսք առաւ «ԱՅՀԻԼ»-ի տնօրէն Յակոբ Լա-

տոյեան եւ պաշտօնապէս յայտարարեց, թէ հայ համայնքի կալաններուն կրթական նպաստ տրամադրող ֆոնտ մը հիմնուած է, որ կը վերաբերի թէ դպրոցականներու եւ թէ համալսարանականներու:

Ան դրուատեց Համազգայինի եւ Լիբանանահայ Օգնութեան Խաչի, ինչպէս նաեւ բարեփոխական միութիւններէն ներս գործող բոլոր անձնաւորութեանց ճիգերը՝ թուելով հայկական համայնքին գործադրած շարք մը ծրագիրները՝ սկսելով ժողովրդային բնակարաններու կառուցումէն եւ հասնելով մինչեւ նիւթական յատկացումները՝ սահմանափակ մուտք ունեցող ընտանիքներու եւ դարմանատուներու կառուցումը:

Չեռնարկին հովանաւոր նախարար Ապտալլայ փոխանցեց իր շնորհաւորանքը «ԱՅՀԻԼ»-ի եւ դրուատեց նման սնտուկներու մարդասիրական եւ բարեփոխական աշխատանքի ու ծառայութիւնը եւ վեր առաւ «ԱՅՀԻԼ»-ի բարգաւաճման ու անոր ծառայութիւններու ծիրի ընդարձակման նպատակով գործող բոլոր ազգանուէր անհատներն ու միութիւնները:

Շար.՝ Էջ 10

ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Տնօրէնութիւնը բաց կը յայտարարէ 2002 - 2003 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 2 Սեպտեմբեր 2002էն սկսեալ, ամեն օր առաւօտեան ժամը 8:30էն 14:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիրացնելու համար վերամուտի գրասենեակի աշխատանքները՝ արձանագրութիւնը պարտադիր է ներկայ աշակերտութեան:

Շայ դպրոցը տունն է հայ գաւակին, ուր՝ մօրը կաթին մտնել, կը սնանի հայ ոգիով, կը ստանայ աւիշը իր հայրեցի պատկանելիութեան եւ կը դառնայ չորս լեզուներով գարգացած, ապագայի օգտաշատ հայ, քրիստոնէա, տիպար քաղաքացի:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան թուղթի լուսապատճեն կամ «Իխրաժ քայտ», մըրտութեան վաւերագիր, պատուաստներու եւ առողջ վիճակի վկայագիր եւ 4 լուսանկար:

2002 - 2003 տարեշրջանին եւս մասնակապարտեզի փոքրիկներուն կը մատակարարուի նախաճաշ եւ ճաշ, վարժարանին կողմէ:

ՆՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

6 ՍԵՊՏԵՄԲԵՐ - 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002

ԵՐԿԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «ԵՐԿԻՐ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ


Էջ 4. «Խորհրդարանը մտնում է խաղի մէջ» յօդուածով «Երկիր» կ'անդրադառնայ եռամսեայ արձակուրդէն ետք կրկին աշխատանքի վերադարձող Ազգային ժողովի ընդհանուր մթնոլորտին, մասնաւոր Շայտատանի մէջ ուրուագծուող նախընտրական պայքարին լոյսին տակ:

Էջ 5. «Ա1 +»-ն ընդլայնուած չէ՞ յօդուածը կը խօսի «Ա1 +» պատկերասփիւռի կայանի գործունեութեան: Թերթը կը նշէ, թէ հակառակ անոր որ Շայտատանի ընդհանուր շրջանակներ այս կայանի գործունեութիւնը արգիւտած կը նկատեն, այսուամենայնիւ ան տակաւին կը շարունակէ գործել:

Էջ 7. «Տնտեսութիւն» բաժինով այս անգամ «Երկիր» կը հրատարակէ «Վաճառքը հարցականներ է ծնունդ» խորագրուած յօդուածը, ուր կը խօսուի Շայտատանի ելեկտրական բաշխիչ ցանցերու հարցին մասին:

Էջ 8. «Զօրակցութիւն նորամուտին». Շայտատանի տարբեր շրջանակներու եւ Երեւանի շարք մը համայնքներու անպահով առաջին դասարանցիներուն Շայ Օգնութեան Միութիւնը նուերներ կը բաշխէ:

Էջ 9. «Սատուն Աղաջանեանի ձակատագիրը առկա է». յօդուած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան առաջին աստիճանի «Մարտական Խաչ»-ի շքանշանակիր փոխ գնդապետ Սատուն Աղաջանեանի դիմագրուած կացութեան մասին:



Չորեքշաբթի, 4 Սեպտեմբերին «Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին առջեւ եւ Պատկերասփիւռի պատկերասփիւռի պատկերասփիւռի գաղթականներու շուրջ տեղի ունեցած ապահովական իրադարձութիւններուն լոյսին տակ Հինգշաբթի, 5 Սեպտեմբերի լիբանանեան մամուլը բաւական լայն տեղ յատկացուց այս երկու հարցերուն, թէ «Էմ. Թի. Վի.» կայանին փակումը իսլամ էր լրատուական անդրադարձին առիթ բաժինը:

Չորեքշաբթի, 4 Սեպտեմբերին «Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին առջեւ եւ Պատկերասփիւռի պատկերասփիւռի գաղթականներու շուրջ տեղի ունեցած ապահովական իրադարձութիւններուն լոյսին տակ Հինգշաբթի, 5 Սեպտեմբերի լիբանանեան մամուլը բաւական լայն տեղ յատկացուց այս երկու հարցերուն, թէ «Էմ. Թի. Վի.» կայանին փակումը իսլամ էր լրատուական անդրադարձին առիթ բաժինը:

գաղթականներու բախումը տեղի ունեցաւ բաւական անակնկալ կերպով եւ 32 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով լիբանանեան բանակը մտաւ պաղեստինեան գաղթականներու:

Ֆրանսատառ «Լօրիան Լը ժուր» թերթը նոյն հարցին վերաբերող լրատուութիւն մը կը վերաբերէ հետեւեալ կերպով. «Լիբանանեան բանակը պաղեստինեան գաղթականներու մը մէջ յարձակման կ'ենթարկուի»:

«Տիար» կը նշէ, թէ լիբանանեան բանակը Պատկերասփիւռի «Տալիս» գաղթականներու մէջ խուսափած է պինդապահեցման մը եւ գաղթականներու մէջ տեղի ունեցած բախումին ընթացքին նահատակուած է տասնապետ մը:

«Սաֆիր» նոյն հարցին շուրջ կը գրէ. «Լիբանանցի պինդուր մը եւ պաղեստինցի պինդուր մը կը սպանուին. անակնկալ բախումներ՝ «Տալիս» գաղթականներու մէջ»:

Նոյն թերթը կ'անդրադառնայ նաեւ Տէյ-վիտ Սաթրֆիլտի Լիբանան այցելութեան եւ կը յայտնէ, թէ ամերիկացի պաշտօնատար լուսակցութիւններ ունեցաւ Կոր. Լահուտի, Պըրրիի, Հարրիի եւ ժոմպարի հետ եւ բանակցութիւններ ունեցաւ արտաքին գործոց նախարարութեան մէջ:

«Մեր հետ ոչ մէկ պայտակամ կամ սպանալիք բերած ենք. մեր նպատակը բռնաբարքներուն վերջ տալն է», ըսաւ Ս. Սաթրֆիլտ:

Այսպէս, «Տիար»-ի խմբագիր Շարլ Էլուպ առաջնորդող յօդուածով մը մեծ մանշէթի վրայ կը հարցադրէ. «Ինչո՞ւ պետութիւնը անձնասպան կ'ըլլայ եւ ինչո՞ւ ձեռքբերումները կը յանձնէ քամին: Արդե՞ք երկխօսութիւնն ու չափաւորականութիւնը արգիւտած են, իսկ պահանջուածը միայն ծայրայեղականութիւնն է: «Էմ. Թի. Վի.» կայանը փակուեցաւ ամբողջական կերպով. արդե՞ք այս մէկը պատկերասփիւռի խեղդելու առաջին քայլն է»:

«Մուսթաֆայա» թերթը անդրադառնալով նոյն հարցին կը յայտնէ, թէ ըստ դատական իշխանութիւններուն, «Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին ամբողջական փակումը յառաջիկայ սիւններուն առաջըր առնելու քայլ մըն է: Թերթը կը յայտնէ, թէ «ժողովրդավարական հանդիպում»-ի (Ժոմպարի պլոք) անդամ երեք նախարարներ պատկերասփիւռի կայանին փակման դէմ առ ի բողոք պիտի չմասնակցին կառավարութեան նիստին եւ աշխատանքներուն, իսկ մամուլը սենտիքան մագլցումի քայլեր կը նախատեսէ:

Պատկերասփիւռի գաղթականներու շուրջ տեղի ունեցած իրադարձութիւններուն վերաբերեալ «Սաֆիր» օրաթերթի խմբագիր Թալալ Սալման թերթին առաջին էջին վրայ ստորագրած է առաջնորդող յօդուած մը «Ապտուութեան հարցը մէկ է» խորագիրով: Անդրադառնալով պատկերասփիւռի կայանին փակման հարցին՝ թերթը կը գրէ, որ կայանին փակումը դիմաւորուեցաւ դատապարտումի լայն ալիքով. այս հարցով կը սպասուի Կորակցութեան հաւաք մը:

Իր կարգին, «Նահար» կը նկատէ, թէ «Էմ. Թի. Վի.»-ի փակումը տագնապ մը կը պայթեցնէ եւ կը բանալ պատկերասփիւռի ճակատամարտը: Թերթը նաեւ կ'անդրադառնայ մարոնի եւ պիսկոպոսներու հերթական ժողովին յայտարարութեան, ուր քրիստոնէականներուն նկատմամբ իշխանութիւններուն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՑ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԿՆՈՂԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՀՈՍ)

ՊԱՍԱԽՍՈՒԹԻՒՆ

Նիւթ՝ ՀՆԴԵՒՐՈՍԵՄԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԲԱՆԱՍԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ՝ **ՄԿՐՏԻԶ ԱՐՄԱՆՆԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 7 Սեպտեմբեր 2002, երեկոյեան ժամը 6:30ին, ՀԵՀՈՍի կենդանաւորութիւն մէջ, մայրավանք, Անթիլիաս:

ԸՐԱԹԵՐ

«ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ»

ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ԿԱԶՄԱՌՈՂՈՒՄԻ ԿԵՐՈՒ ԱԳՔԻԽԱՅԻ Մայրավանք, հեռ. 04-410001 2002-2003 տարեշրջան

Լրացուցիչ արձանագրութիւնները տեղի կ'ունենան 4 Սեպտեմբերէն 13 Սեպտեմբեր 2002 Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 9Ը 12:

Վերամուտի ընդունելութիւն՝

Ուրբաթ 13 Սեպտեմբերին, ժամը 16ից:

Դասերու սկիզբ՝

Երկուշաբթի 16 Սեպտեմբերին:

Կ'աւանդուից

BTի եւ TSի ծրագիրները եւ հայերէն յատուկ դասաճիւղերը:

Կ'ընդունուից միջնակարգ ուսումի տէր անձեր:

2001-2002 տարեշրջանի ուսանողուհիները պէտք է նշուին արձանագրութիւն: Աճճամբ ներկայանալով անհրաժեշտ չէ: Կարելի է նաեւ հեռաձայնել:

ONE SECOND IS ENOUGH... Արդարեւ կը Պատկերասփիւռի Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՔ ՆԵՐԿԱՅ ԵՄ ԱՄԵՆ ԵՐԿԱՍԵՐԿԱՆ.

ԱՅՀԻԼ AFHIL

Աֆիլ-ի Երկ, Ք. Յարկ, Գեռ, Եւ Շաքս. (01) 262231-242556-242557
 Imn. AFED, 2ème étage, T41, and Fax: (01) 262231-242556-242557

«ԳԱՐԵԳԻՆ Ա. ԻՐ ԲԱՌԵՐՈՎ»

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԵ ԿՈԳԵԿՈՉԷ ԱՍԵՆԱՅՆ ԸԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ԸՆՆՂԵԱՆ 70ԱՄԵԱԿԸ

Հագուստով և մարմանով իր արտաբնական և բնական արտաքին հարմարություններով և հարմարություններով մեջ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա.ի մահաժամը երրորդ տարեկիցին եւ ծննդեան 70ամեակին առիթով անցեալ Յունիսի սին լոյս տեսաւ «Գարեգին տը Ֆըրսը. ին հիզ օն ուրբտ» անգլերէն գիրքը, որ կ'ոգեկոչէ ականաւոր կրօնաւորին կեանքն ու գործունէութիւնը: Գիրքը հրատարակուած է Լոնտոնի մէջ հաստատուած «Գարեգին տը Ֆըրսը» թիւրքերէն լեզուով: Կ'ակնկալուի, որ ամէն տարի լոյս տեսնէ երկու գիրք: Հրատարակիչները օրինակներ պիտի ուղարկեն աշխարհի զխաւոր թանգարաններուն:

«Գարեգին տը Ֆըրսը. ին հիզ օն ուրբտ» գիրքին հրատարակութեան առիթով հրատարակուած հաղորդագրութիւնը կը նշէ, թէ Գարեգին Ա. աշխարհի տարածքին յարգուած եւ պատիւի արժանացած կրօնաւոր մը, աստուածաբան մը եւ Էքիմենիք շարժումի ղեկավար մըն էր:

«Ան մեզ մօտեցուց Աստուծոյ եւ մեզ դարձուց հպարտ գաւակները հայ եկեղեցիին: Անոր ամբողջական գործերուն հրատարակութիւնը գէթ որոշ չափով պատկերը պիտի ուրազած արտասովոր եկեղեցականին, այն սերունդներուն համար, որոնք երբեք պիտի չտեսնեն անոր փայլուն աչքերը եւ պիտի չտեսնեն անոր զգացմունքը ինչպէս խօսքերը», կը գրէ Այրիս Փափագեան 238 էջերէ բաղկացած գիրքին նախաբանին մէջ:

Աւելի քան 100 սեւ ու ճերմակ եւ գունաւոր լուսանկարներէ բաղկացած գիրքը կենսագրական գործ մը չէ, այլ պատկերաւոր մէկ պատմութիւնը կը հրաւրէ Ամենայն Հայոց կաթողիկոսին կեանքին, անոր ծննդավայր Քեսայէն մինչեւ Անթիլիասի դպրեւանքը, Օքսֆորտի համալսարան, եկեղեցական տիեզերական ժողովներ, առաջնորդական թեմեր, Կիլիկիոյ կաթողիկոս եւ ի վերջոյ Ամենայն Հայոց հայրապետ: Լիւսանակարները տրամադրուած են Կիլիկիոյ եւ էջմիածինի կաթողիկոսութիւններուն, Գարեգին Ա.ի բարեկամներուն եւ ընտանիքի անդամներուն կողմէ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ., Յովհաննէս Պօղոս պապ եւ Լոնտոնի եպիսկոպոսը յատուկ խօսքեր յղած են գիրքին հրատարակութեան առիթով: Պապը կը նկատագրէ իր խոր համակրանքը Գարեգին Ա.ի նկատմամբ, իսկ Լոնտոնի եպիսկոպոսը հիացումով կը յիշէ անոր ունկնդիրներ կախարհողի տիպարը:

«Յիշարժան այս յորեւթանին վերստին մեր հայեացքի առջեւ յառնուած է անձնորդ եւ քաջ հովիւր, խանդավառ ուսուցիչը, հմուտ քարոզիչը, ով գիտէր առանց յոգնելու գրուցել աշխարհասփիւռ իր ժողովուրդի հետ, հայրաքար առաջնորդել ղեպի Աստուած եւ ամէն հայի հոգում վառ պահել Սուրբ էջմիածնի ու Հայրենիքի սէրը, նրանց սրտերը գանձարան դարձնել հնագույն ու հարուստ հայ մշակույթի», կը գրէ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.: ողջունելով հրատարակութիւնը:

Գիրքին խմբագրող Այրիս Փափագեան իր ծաւալուն ներածականին մէջ կը գտնէ Գարեգին Ա.ի կեանքի ուղիին պատկերը եւ անոր կտրած իւրաքանչիւր հանգրուանը՝ մէջբերութեամբ կատարելով անոր քարոզներէն, դասախօսութիւններէն, յուշերէն եւ ճանապարհորդութիւններէն, արժեքներով անոր գաղափարներն ու իրագործումները:

«Ան իր ամբողջ կեանքին ընթացքին ապրած է Աստուծոյ բարութեան հաւատքով, կեանքն ու մարջ գիմագրուած է հաւատքով, յոյսով ու սիրով», կը գրէ Փափագեան:

Մկրտութեան անունով Նշան Սարգիսեան՝ Գարեգին Ա. ծնած է Քեսայ, 27 Օգոստոս 1932ին: Յաճախած է Քեսայի նախակրթարանը, հայրը հակառակ դերձակ դառնալու եւ ընտանիքին նիւթական բեռը թեթեւացնելու իր ցանկութեան, զայն ողարկած է Անթիլիասի դպրեւանքը, գոր աւարտած է պատուոյ իշխանականութեամբ: Այնուհետեւ ան միշտ խանդավառութեամբ խօսած է Քեսայի մէջ իր արմատներուն մասին, ուր զգացած է կապ հոգին հետ, ինչպէս նաեւ՝ Աստուծոյ եւ աստուծոյ շնորհներուն: Ներածականին յաջորդող էջերուն մէջ Գարեգին Ա. կաթողիկոսին «Խորհէ եւ մտիր» գիրքէն անգլերէնի թարգմանած հատուած մը կը նկարագրէ, թէ ինչ պայմաններու մէջ կայացած է Անթիլիասի դպրեւանքը երթալու որոշումը, թէ պատանի Նշանը ինչպէս հոն մուտք գործած է առանց մտածելու, սակայն 6 տարուան կրօնական եւ մտաւորական դաստիարակութեանց ետք դարձեալ մտած է, այս անգամ՝ մտածելով:

Գարեգին Յովհաննէսի կաթողիկոսին անունով մկրտուելով՝ ան ձեռնադրուած է սարկաւազ: 1956ին դարձած է դպրեւանքի տեսուչ, ապա զացած է Օքսֆորտի աստուածա-

բանութիւն ուսանելու: Մտաւորական եւ ոգեղէն կեանքը համակած են զինք: Ան ընտրած է վանական կեանքը, գիտակցելով, որ հայ եկեղեցիին աւանդութեան մէջ կրօնաւոր դառնալը ժողովուրդէն խզում չի նշանակեր: Օքսֆորտը կեանքը շրջող փորձառութիւնն ըմբ էր Գարեգին Ա.ի համար: Ան իր պարտականութիւնը համարած է քրիստոնեայ Հայաստանը, հայ ժողովուրդը եւ եկեղեցին ծանօթացնել Օքսֆորտի մէջ, ուր քրիստոնէական տարբեր աւանդութիւններու ծանօթանալով վերադարձանքը եւ վերաբերմանը է հայկական քրիստոնէական աւանդութեան ներհուն ուժը՝ տիեզերական եկեղեցի պարունակին մէջ:

Գարեգին Ա. Էքիմենիք շարժումին զխաւոր ջատագովն էր հայկական եկեղեցիին մէջ: Ան մասնակցած է միջեկեղեցական ժողովներուն, Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի ընդհանուր ժողովներուն, Վատիկանի, Անկիլիքան եւ Ուղղափառ եկեղեցիներու ժողովներուն: Էքիմենիք շարժումի հիմնադիրներուն գաղափարներէն ներշնչուած՝ աստուածաբանական դասախօսութիւններ տուած է Իոնանիոյ, Հնդկաստանի եւ Մոսկովայի մէջ: Գարեգին Ա.ի համար Էքիմենիք մը ոգեղէն խորախորհուրդ իրականութիւնն էր, կենսական ուղղութիւնն էր՝ քրիստոնէական հաւատքին մէջ: Ան կը հաւատար, որ ամէնէն աւելի տիեզերական սիրոյ ճամբով կարելի էր հասնել երկխօսութեան, իսկ Էքիմենիք մը այդ սիրոյն մարմնաւորումն է:

Երիտասարդները հայ ժողովուրդի կրօնական եւ մշակութային կեանքին մէջ գերակատար դարձնելու մտադրութեամբ՝ 1963ին Գարեգին Ա. Պէյրութի մէջ հիմնած է Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւնը: Օքսֆորտին վերադառնալէ ետք դպրեւանքի տեսուչի իր պաշտօնը վերստանձնելու կողքին ան ուսուցիչի եւ դասախօսի պաշտօններ վարած է դպրոցներու եւ համալսարաններու մէջ: Այնուհետեւ իբրեւ Ատրպետականի թեմի առաջնորդ՝ ան վերականուցած է դարաւոր Հարստութիւններ պարունակող Նոր Ուղղափառ հայկական թանգարանն ու գրադարանը, վերանորոգած է հայկական տպարանը եւ վերադասաւորած՝ եկեղեցական արխիւները: Իբրեւ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ՝ ան մեծ աշխատանք տարած է Յեղասպանութեան 60ամեակը արժանանալու ձեւով յիշատակելու, զայն նկատելով՝ գիտակցութեան աւելի բարձր մակարդակ նուաճելու, արդարութեան ձգտումը պահպանելու եւ զայն ոչ հակական շրջանակներու ծանօթացրելու առիթով: «Ինչ որ իբրեւ օրինակ ծառայեց հետագային», կը գրէ Փափագեան:

Իբրեւ խորհրդի Ա. կաթողիկոսի աթոռակից, Գարեգին Ա. Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներու ընթացքին է «ապրող յոյս»-ին: Անոր կաթողիկոսութեան շրջանին Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը օժտուած է նոր տպարանով, թանգարանով եւ վերանորոգւած մատենադարանով: Ան թէք եւ կը գիտակցէր արդիականացումի կարիքին, սակայն վերականութիւններ ունէր եւ զգուշաւոր մօտեցում կը ցուցաբերէր արհեստագիտական նորութիւններու նկատմամբ, ինչպէս նաեւ՝ աշխարհիկ արդի կեանքի չափազանցութիւններուն եւ անոնց փորձութիւններուն, զորս կը նկատէր աւօրեայ կեանքի մէջ Աստուծոյ տեղը փոքրացնող սպառնալիք:

Գարեգին Ա. Միջին Արեւելքի Եկեղեցիներու խորհուրդի հիմնադիր անդամ էր եւ պատուոյ նախագահ: Ծարտասանական իր կարողութեամբ իբրեւ դասախօս հրաւիրուած է Միջին Արեւելքի, Քանադայի եւ Միացեալ Նահանգներու համալսարաններուն եւ եկեղեցիներուն կողմէ: Իր կաթողիկոսութեան շրջանին հանդիպումներ ունեցած է Յովհաննէս Պօղոս Բ. պապին, Քենթրալը իր առաջնորդին, Դանիոյ եւ Գերմանիոյ լուստերական եկեղեցիներուն, Աւստրալիոյ, Չուեիցերիոյ եւ զպտի եկեղեցիներու առաջնորդներուն հետ:

Հայաստանի երկրաշարժէն անմիջապէս ետք Գարեգին Ա. այցելած է աղէտի վայրը: Հաւատքը ինքզինք կը յայտնէ ճիշդ այն պահին, երբ տրամաբանութիւնը հասկնալու անկարող է, ըսած է ան՝ երկրաշարժը նկատելով Աստուծոյ ներկայութեան հաւատարու ծանր քննութիւն մը:

Համահայկական Հիմնադրամի կեդրոնական Յանձնախումբի տնօրէններու խորհուրդին անդամներէն մէկն էր Գարեգին Ա.: Երբ 1995ին ընտրուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոս: Պատմութեան մէջ աննախընթաց իրադարձութիւն էր, որ Կիլիկիոյ կաթողիկոս մը դառնար էջմիածնի եւ Ամենայն Հայոց կաթողիկոս: Ան իր գահակալութեան քարոզին մէջ հայ եկեղեցիին միութիւնը ջատագովելով զայն կը հրաւիրէր ստանձնելու արդի կեանքի մակերեսային եւ անցողակի երեւոյթներուն ղեմադր քրիստոնէական սեփական ժամանակների զաստիարակութիւնը փոխանակելու պարտականութիւնը, շեշտելով, որ այլապէս տիրող պարագայութիւնը շուտով պիտի սեղծէր տարբեր պայաններ, որոնք պիտի լեցնէին ոգեղէն շփոթ կամ կրօնական անիշխանութիւն՝ Հայաստանի մէջ:

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումին 1700ամեակը ոսկի առիթ էր Գարեգին Ա.ի համար՝ ամբողջապէս հայ եկեղեցիին միութիւնը եւ նոր տեսլական մը ընդհանուր Հայաստանի նորակառոյց պետութեան: Ան կը յայտարարէր, թէ հայ եկեղեցիին ստեղծագործական պատմութիւնը ստանց խզումի շարունակուած է 17 դար եւ իբրեւ այդպիսին մաս կը կազմէ քրիստոնէական աշխարհի եւ մարդկութեան պատմութեան: Ան 1700ամեակի նշումը լաւագուց ճիշդ կը նկատէր այս իրականութիւնը միջազգային ուշադրութեան առարկայ դարձնելու, հայկական քրիստոնէական մշակույթի երեւոյթները ծանօթացնելու եւ աշխարհի բազմին քրիստոնեայ ժողովուրդը ըլլալու իրողութիւնը արդարացնելու, մասնաւոր՝ երբ ներկայիս մշակույթներու հանդիպումը եւ փոխանակումները կը ստեղծեն երկխօսութեան առիթներ: Ազգային մակարդակի վրայ ան կը թելադրէր 1700 տարուան անցեալը օգտագործել իբրեւ ներշնչումի աղբիւր՝ նոր իրագործումներու:

Գարեգին Ա. կաթողիկոսին ճիշդագուց սկսած է բարձրանալ Երեւանի Մայր եկեղեցին, որուն հիմնարկէքը կատարած էր Վազգէն Ա. կաթողիկոս: Անոր ջանքերով բազմաթիւ եկեղեցիներ եւ վանքեր վերանորոգուեցան եւ նոր եկեղեցիներ կառուցուեցան Հայաստանի տարածքին: 1700ամեակի առիթով ան կազմակերպեց գիտաժողով մը եւ հրաւիրեց հայ թէ օտար մասնագէտներ՝ կարծիքներ լսելու համար 1700ամեակը պատշաճ ձեւով ոգեկոչելու առերեսութեամբ: Այս առիթով անոր հովանաւորած ցուցահանդէսները շրջեցան Մոսկուա, Աթէնք եւ Վատիկան:

Գարեգին Ա.ի ծննդեան 70ամեակը մատենագրութիւնը ոգեկոչելու նախաձեռնութիւնը պատշաճ ձեւ մը կը թուի ըլլալ պատուելու կրօնաւոր մը, որուն կեանքին մէջ գիրքը միշտ ունեցած է յատուկ տեղ: Ան գրած է տասնեակ մը ուսումնասիրական եւ աստուածաբանական գիրքեր, հազարաւոր յօդուածներ, քարտեզներ եւ ներածականներ, հրատարակած է հարիւրաւոր գիրքեր եւ Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ հիմը դրած է գիրքերուն տարեկան ցուցահանդէսի մը աւանդութեան՝ գիրքի նկատմամբ սէր փոխանցելու նպատակով: Այրիս Փափագեան Գարեգին Ա. կաթողիկոսին անյաջ ընթացող տիպարը նկարագրելով կը գրէ, թէ ընթացողութիւնը կրճարական արարք մը չէր անոր համար, իսկ անոր իւրաքանչիւր կարգացած յիշելու մէջ էր:

«Արտասովոր երեւոյթ է, որ մէկը միտածմանակ լաւ խօսող եւ լաւ ընթացող ըլլալ: Վեհափառ այս օրէնքին բացառութիւնն էր: Ան ունկնդիրներ կը գրաւէր եւ անոնց ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացած կը պահէր: Կը տխրապետէր նոյն խօսքին մէջ հաւասարակալու հայերէն, անգլերէն կամ ֆրանսերէն գործածելու, առանց շեղելու իր միտքէն կամ շփոթի մատնելու ունկնդիրը: Ան իր քարոզները գրող մը չունէր, այլ ինք կը գրէր իր սեփական քարոզները,՝ կը գրէ Փափագեան: Արդի հասկացութեամբ աշխատանքի մոլի մըն էր: Կ'աշխատէր արեւածագէն մինչեւ ուշ գիշերը՝ յայնիսկ ամէնէն ղօժուր պայմաններուն մէջ, Լիբանանի պատերազմին ընթացքին կամ Ֆիլիպինիկ անկախութեան մէջ անոր գրիչն ու նոթատետրը իրեն հետ էին: Ան կ'արձանագրէր իր մտածումները, վախերը, աղօթքները, յոյսերն ու երազները:»

Կաթողիկոսն անբաժան վերջին նոթատետրը անհետացած է անոր մահէն ետք: Խմբագրողը կը մտածէր, որ անիկ վերայտուելու:

«Գարեգին տը Ֆըրսը. ին հիզ օն ուրբտ» գիրքը վաւերագրական ժայռակէտի պէս կը բացուի ընթացողին դիմաց: Իւրաքանչիւր էջի վրայ իր խօսքով եւ պատկերով կը վերականգնուանայ խորիմաց կրօնաւորը, միջազգային եւ ազգային դէմքը, մտաւորականն ու աստուածաբանը, որուն 1960ական տարիներէն մինչեւ մահ արտասանած պատգամները, արժեքներն են նույն վերջին կեանքին արտայայտութիւնները այժմէականութեան կիշտ մը կը պահեն:

Ընթացողը կը հաղորդուի տարիներու ընթացքին ունեցած աշխարհաշայեացքի մը իմաստութեամբ: Բժախնդիր եւ համապարփակ մօտեցումով ընտրուած Գարեգին Ա.ի խօսքերը բաժնուած են 6 գլուխներու եւ կ'ընդգրկեն անոր Ամենայն Հայոց կաթողիկոսի, Կիլիկիոյ կաթողիկոսի, ղեպի վանական կեանք ուղեւորի, Էքիմենիք շարժումի ջատագովի, Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի եւ դէպքի հռչակատարած անոր վերջին ուղեւորութեան մտածումները:

Քրիստոնէութիւնը ապրող կրօն մըն է, որ վերջին 2000 տարիներուն կեանքի հղովովք մը ճնշած է հայերուն համար: Առանց քրիստոնէական հաւատքին գոյութեան պայտուարութեան՝ հայ ժողովուրդին ստեղծագործական յարատեւութիւնը անկարելի պիտի ըլլար, կ'ըստ ան եւ իբրեւ Ամենայն Հայոց կաթողիկոս կոչ կ'ունեղէր հայ եկեղեցիին աւանդութեան վերականգնումին՝ ապահովելու համար անոր շարունակութիւնը եւ Հայաստանի նո-



Գարեգին Ա. իբրեւ կաթողիկոս տեսակցութիւններ ունեցած է աշխարհիկ եւ եկեղեցական բազմաթիւ ղեկավարներու հետ: Յովհաննէս Պօղոս պապին հետ այս լուսանկարը առնուած է 1999ին Վատիկանի հիւրընկալած հայկական ցուցահանդէսին առիթով:

րաստեղծ հանրապետութիւնը օժտելու մարդկային եւ բարոյական ամուր սկզբունքներով: Ան կը դրուատէ աղանդներու եւ օտար արշաւաններու դիմաց հայ եկեղեցիին տոկոսնութիւնը եւ կը թելադրէ ամբողջով ազգային պատկանելիութեան արժանապատուութիւնը, սեփական ուժերու ապահովելու՝ ինքնաճանաչումի եւ ինքնագիտակցութեան հրաւիրելով ժողովուրդը: Այլապատեման մէջ համերաշխութեան կարելիութիւնը տեսնելով՝ ան կը քարոզէ խաղաղութեան, հասկացողութեան, գործակցութեան եւ փոխադարձ վստահութեան գեղեցիկ գաղափարները, կը շեշտէ պատմութիւն կրօնաւոր համայնականը եւ կը տեսնէ Հայաստանի ոգեղէն վերադարձութեամբ:

Իբրեւ Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոս՝ ան կը հաւատար, թէ անտեսանելի եւ ամենակարող Աստուծոյ ձեռքին մէջ գործիք դառնալը մեծագոյն պատիւն էր մարդ արարածին համար: Տէր Ջօրի մէջ կը տեսնէր Յեղասպանութեան շոշափելի իրականութիւնը մը եւ Ա. Նասատական եկեղեցիին հիմնարկէքին առիթով հատուանած իր քարոզին մէջ զայն կը նկատէր ոչ թէ խորհրդանշիչ, այլ՝ յարութեան նշան, յուսատու աղբիւր, տեսլակէտ եւ լուստավայր: Վերանորոգութիւնը անոր հիմնական սկզբունքներէն մէկն էր: Ոչ մէկ ժողովուրդ կամ եկեղեցի կրնայ ապրիլ միայն աւանդութեամբ: Եկեղեցին կը վկայէ այն իրականութիւնը, թէ նորին արմատները կը գտնուին հինին մէջ եւ հինը ամբիմաստ է, եթէ չվերանորոգուի, իսկ քրիստոնէական հաւատքը միաժամանակ հին ու նոր է եւ կը վերանորոգուի բոլոր ժամանակներուն մէջ, գրած է ան: Նախքան Կիլիկիոյ կաթողիկոս դառնալը՝ ան կաթողիկոսութեան պատմութիւնը եւ հայ եկեղեցիին ժամանակակից դերը արժեւորող գրութիւններու մէջ շեշտած է, թէ հայ եկեղեցիին առանձնատեսակութիւնը անոր ազգային տարողութեամբ քաղաքական հարցեր կը ծառանան մարդկային ճիշդութիւնը դիմաց, ան սեփական սկզբունքներուն եւ նպատակներու վրայ հիմնուած քաղաքականութեան ջատագովն էր եւ հարց կու տար: Ինչու՞ կ'պիտի ամբընամ աշխարհին ըսելու, թէ չեմ ուզեր, որ ինձի հետ վարուին այնպէս՝ ինչպէս վարուած են Տօրս հետ: Ան Անթիլիասի դպրեւանքին վերանորոգութեան մէջ շեշտեց, որ մարդկային կեանքի ուղեւորութեան օրը արտասանած իր քարոզին մէջ զայն կ'որակէր Լիբանանի նկատմամբ հաւատքի ցուցանիչ, կեղերուն մը, ուր խաղաղութեան սպասարկուեցան պիտի պատրաստուէին:


Իրօք, խաղաղութեան հաւատքը երջանկալիշատակ կաթողիկոսին կեանքի ուղեւորութեան առաջնորդող լոյսը եղած է: Կոչումի գաղափարը աստիճանաբար զարգացած է անոր մէջ: Երբեք Աստուծոյ դէմ չեմ պայքարած իբրեւ ըմբոստ՝ գրած է ան: Այս համոզումը ցատուին կերպով կը դրոշմուի 1999ին հիւանդանոցին մէջ գրուած անոր մէկ աղօթքին մէջ, որ հրատարակուած է գիրքին վերջաւորութեան: այս գրութեան մէջ քաղցկեղէն տասնպոյլ կրօնաւորը կը խօսի աստուածային սիրոյ անմար լոյսին մասին: Ան էջմիածնի միաբանութեան ուղղուած իր հրաժեշտի խօսքին մէջ կոչ կ'ունեղէ կենդանի պահելու հայ եկեղեցւոյ հոգեւոր եւ սրբազան առաքելութեան: Անոր վերջին բառերն են՝ «Անտանջիւրդեմ ծանր հիւանդ եմ, դուք մնաք զօրաւոր»:

Մարդոց նման, գիրքերը տուն կը փնտռեն: Ընթացողն է, որ կեանքը կու տայ գիրքին, առիթով մը ըսած է Գարեգին Ա.: Այսօր անոր յիշատակին հրատարակուած է գիրք մը, որուն մէջ ճիշդ չէ ինչպէս ծառայեցան չափով արժեքներուն վերջին 40 տարիներու Սփիւռքի իրականութեան մէջ ամէնէն տիրական դէմքերէն մէկը: Ընթացողին կը մնայ կեանքի կոչել զայն:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՀԱՍՊԱՅԱ ԻՐ ՄԻՋՆԱԲԵՐԴԻՆ ՇՆՈՐՀԻԻ ԿԸ ՓՈՐՁԵ ՎԵՐԱԿԵՆԳԱՆԱՑՆԵԼ ԻՐ ԶԲՕՍԱՇՐՋԱԿԱՆ ԳԻՄԱԳԻԾԸ



Հիբրանի քաղաքացիական պատերազմը աւերիչ հետեւանք ունեցաւ նաեւ երկրին հնագիտական եւ ազգային արժէքներ կայացնող վայրերուն վրայ: Անոնց մէջ շատեր ենթարկուեցան ուրակոծումներու եւ հրդեհներու, տուն դարձան գաղթականներու եւ մնացիլ լրուած եւ ծամանակին ու բնութեան քմահաճոյքներուն ենթակա: Անոնց մէջ բացառութիւն չէր չաւայան՝ Եհեայի իշխաններուն միջնաբերդը եւ տիրուածի աշխարհին հոգեւոր կենտրոնը:

Րնտանիքին բնակավայրը:

Տասնամեակներու ընթացքին Հասպայան տեսադաշտը խճողւած է դէպի երկինք բարձրացող շաղախապատ շէնքերով, որոնք, քաղաքին բնակիչներուն իսկ հաստատումով, տգեղացած են շրջանը: Անոնք արդէն իսկ կը մտածեն միջոցներու մասին՝ Հասպայանի վերադարձելու համար սուր անցելի գեղեցկութիւնը: Աւանը կարիք ունի ջրային մատակարարման եւ կոյուղիի ցանցերու շինութեան, ծամբաներու կառուցման, ինչպէս նաեւ՝ աւանդական եւ հին շուկաներուն վերանորոգութեան: Այս աշխատանքներուն մեծ մասը սկիզբ կ'առնէ յառաջիկայ գարնան: Սակայն այս աշխատանքներուն առանցքը կը կազմէ

միջնաբերդին վերանորոգութիւնը, որուն շնորհիւ Հասպայանի քաղաքայեան տարածքը կը յուսալի վերականգնել: Այդպիսով անոնք կը յուսան նաեւ աշխուժացնել Հասպայանի գրեթէ գոյութիւն չունեցող տնտեսութիւնը:

Ինչ կը վերաբերի միջնաբերդին, ապա անոր կարգ մը բաժինները կը շարունակեն բնակելու: Միաժամանակ ալ կը շարունակէ բաց մնալ հանրութեան դիմաց: Միջին Արեւելքի միակ բնակելու աշխարհը այս քաղաքին դիմաց կը բանայ տակաւին շինող ամբողջ աշխարհը:

ՀՆՈՒՍԵՍԻԼ

Table with TV and radio program schedules. Columns include channel names (e.g., ԹԵ. ԷԼ., ՄՈՒՍԹԱՔՊԱԼ), times, and program titles. Includes a section for 'ԵՆ. ՊԻ. ԷՆ.' and 'ՆԻՈՒ ԹԻ. ՎԻ.'.

ՍԱԿԱՐԱՆ

Table of exchange rates for various currencies and goods. Columns include item names (e.g., Սուրիական թղթուկի, Իրաքեան տինար) and their respective rates.

www.lemagan.com

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պետք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԱՇՏԱՐ 5:00: ՄԱՀԱՋԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազը կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առնել որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՆՈՒՅՆ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

- ՆՈՒՅՆ (21 Մարտին 20 Ապրիլ)
Լաւ բարեկամութիւն մը առիթ պիտի ստեղծէ օգտակար ներդրումներ կատարելու: Կը զգաք, թէ օրերը արագ կ'անցնին անբնական կերպով: Ծարուսանկեցէք աշխատիլ նոյն թափով:
ՆՈՒՅՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Եթէ վերջերս ենթարկուած էք սիրային յուսախաբութեան մը, մոռցէք այդ. այսօր նոր հանդիպումով պիտի վերագտնէք ձեր ժպիտը:
ՆՈՒՅՆ (22 Մայիսէն 23 Յունիս)
Ընտանեկան բարեկարգում մը կամ որոշուած հարց մը քիչ մը պիտի յետաձգուի՝ ջղայնութիւն պատճառելով ձեզի: Համբերեցէք:
ՆՈՒՅՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Եթէ դպրոցական եք կամ ուսուցիչ, ուսումնական տարին պիտի սկսիք ոգեւորութեամբ, բայց այս ուրախութիւնը հազիւ մէկ կամ երկու ամիս պիտի տեւէ:
ՆՈՒՅՆ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Կարելի խնայողութիւն մը պիտի ընէք այսօր, որովհետեւ դրամը պետք պիտի ըլլայ ձեր մէկ կենսական երազը իրագործելու:
ՆՈՒՅՆ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Եթէ այսօր ձեր տարեդարձն է, զայն տօնեցէք փառաւոր շուքով: Հրաւիրեցէք սովորականէն աւելի բարեկամներ, եթէ նոյնիսկ ձեր տունը բաւարար չըլլայ զանոնք պարփակելու: Օրը պիտի անցնի շատ գուրբ եւ հանելի:
ՆՈՒՅՆ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Գործի վերաբերեալ տաղտկալի հարց մը կարգադրելու պիտի ստիպուիք: Առանց աղմուկի կարգադրեցէք տուեալ հարցը:
ՆՈՒՅՆ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Այս իրիկուն մեծ երեկոյթ մը կազմակերպեցէք ձեր տան մէջ, հրաւիրեցէք ձեր բոլոր բարեկամները, որոնք վերջին ժամանակներուն ցրուած էին հոս ու հոն:
ՆՈՒՅՆ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Կը կարծէք, որ աշխատանքի մարզին մէջ հոգի կը փչէ անցյալու: Իրիկունը շարժանկարի սրահ մը կազմէք աղուոր ծափաւեց մը դիտելու եւ մոռցէք ձեր մտահոգութիւնը:
ՆՈՒՅՆ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Ինչ հարց, որ կայ ունի արտասահմանի հետ, պիտի ունենայ բարեք լուծում, պիտի նպաստաւորուի ամէն տեսակ տեղով. ու ասիկա՝ սիրոյ, աշխատանքի կամ այլ հարցի պարագային:
ՆՈՒՅՆ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ունիք իրաւ յատկանիշը նախաձեռնելու կարելի աշխատանքներ: Այս պատճառով ամէն կողմէ պիտի դիմեն ձեր խորհուրդին եւ գիտութեան:
ՆՈՒՅՆ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Գործակցութեան պակաս կայ ձեր եւ ձեր սիրելի ընկերոջ միջեւ: Բիչ մը ժամանակ տրամադրեցէք երկուքդ ալ, որպէսզի կարենաք հասնիլ շինիչ եզրակացութեան մը: Համբերութիւն...

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՍՈՎՐԱՏ ԿԱՐԱՊԵՏ ԹԱՇԾԵԱԼԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԱԻԷՆ ԹՈՐԹԵԱԼԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅԼՃԱՐ ԹԱՂԵՆՍ ԱՅԼԹԱՂԵԱԼԻ մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՂԱՄԱՍՎՈՍ ԱՐՓԻ ԾԱՆՍԸԶԵԱԼԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Դամասկոսի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 9:30ին:

ՂԱՄԱՍՎՈՍ ԿԻՒԼԻԻԶԱՐ ՕԳՈՒՍՈՒՇԵԱԼԻ (ծնեալ՝ ՍԻՄՈՆ-ԵԱՆ) մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱՄԱՍԿ ԴԵՋՃԵԱԼԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Ժուհի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍՏԵՓԱՆ ՏՈՒՏԱԳԼԵԱԼԻ մահուան Ա. տարեկիցին եւ ՊԱՐՈՅՐ ՏՈՒՏԱԳԼԵԱԼԻ մահուան Ի.Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԹՈՐՈՍ ԱՂՈՒՆԱՅԵԱԼԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Զայրայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ՇԱՄԻՐԱՄ ՆԵՐՍԵՍԵԱԼԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Լոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՐԻ ԳՐԻԳՈՐԵԱԼԻ (ծնեալ՝ ՏԵՄԻՐՃԵԱՆ) մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Լոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԿՐՏԻՉ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱԼԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Լոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԱՐՈՒՀԻ ԹԱՂԵՆՍԵԱԼԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Լոր Սրբի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Lottery table with 11 columns and 11 rows. Contains numbers 1-11 and a grid of numbers for drawing.

ԹԻԻ 5240
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԹՈՒՍԸ
Table with 11 columns and 11 rows. Contains numbers 1-11 and a grid of numbers for drawing.

(*) Վերոյիշեալ յայտարարները ենթակալ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Շ



ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՍՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ ՎԱՂԸ՝ Հ. Մ. Ը. Մ. - ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ

Իր կատարած բարեկամական մրցումներուն ծիրէն ներս, Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցչական կապը վաղը պիտի կատարէ իր երրորդ բարեկամական մրցումը, Լիբանանի 21 տարեկանէն վար կրտսերներու ազգային խումբին դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, ժամը 5:00ին:

Ծանօթ է, որ անցեալ Ուրբաթ Հ. Մ. Ը. Մ. բարեկամական իր առաջին մրցումը (Անսարի դէմ) անարտած էր ձեռնակ հաւասարութեամբ, իսկ անցեալ Չորեքշաբթի 4-1 արդիւնքով յաղթած էր Թատանոն Սուրի:

ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՆԵՐ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻՆ ՄՆԱՅՈՒՆ ԱՄՍԱԿԱՆՆԵՐՈՎ

Հայաստանի ազգային Ողիմպիական կոմիտէի որոշումով յետ այսու ողիմպիական մարտի մրցումներուն հայաստանցի իւրաքանչիւր աշխարհի ախոյեան պիտի ստանայ 55 հազար դրամի մնայուն ամսական:

Հայաստանի մշակութի, երիտասարդութեան եւ մարմնամարզի փոխ նախարար Իշխան Չաքարեան երէկ տեղի ունեցած Հայաստանի ախոյեաններու նուիրում հաւաքին յայտնեց, թէ գալ տարի կարգը պիտի գալ Եւրոպայի ախոյեաններուն:

Նշենք, որ 2000 թուականին Հայաստանի կառավարութիւնը որոշած էր Ողիմպիական խաղերու ախոյեանները վարձատրել ամսական հարիւր հազար դրամով:

ԸՄԲԸԱՍԱՐՏ

ՔՐԻՍՏԻՆԷՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԻ

Երեւանցի Քրիստինէ Նաճարեան, ըմբշամարտի «կուրաշի» (իւզպէքական ըմբշամարտ) աշխարհի ախոյեանութեան 52 քկ. դասակարգի մրցումներուն հանդիսացաւ առաջին՝ յաղթանակով անարտելով իր չորս մրցումները: Նոյնպէս Հայաստանէն Յարութիւն Ղարիպեան (81 քկ. դասակարգ) եւ Կարինէ Ղեւոնդեան (57 քկ.):

Երեւանի մէջ տեղի ունեցող ըմբշամարտի այս ոճի աշխարհի ախոյեանութեան իրենց մասնակցութիւնը կը բերեն 36 երկիրներէ 120 մարզիկներ, որոնց կարգին ողիմպիական, աշխարհի եւ Ասիոյ ախոյեաններ:

ՅԵԾԵԼԱՐՇԱՒ

ԹԻՄ ԹԵԼԵՔՈՍ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ Է ԵԱՆ ՈՒԼՐԻԽՈՎ

Թիմ Թելեքոսի բանբեր Օլաֆ Լուսովիկ յայտնեց, թէ իր ակումբը համաձայնագիր մը ներկայացուցած է գերմանացի հեծելաւոր Յան Ուլրիխի՝ 2003 տարեշրջանին համար:

Նշենք, թէ 1997ի Թուրքիոյ Երանսի ախոյեան Ուլրիխ անցեալ Յուլիսին ուր ամիսով պատժուած էր Գերմանիոյ հեծելարշաւի ֆետերապիստի կողմէ, իրանից ղեկըր օգտագործելուն համար:

Աւելի ուշ, 28ամեայ հեծելաւորորդ խոստովանած էր, թէ տագնապալի պահու մը արգիւտեալ ղեկահատ առած էր:

Վերջին տարիներուն Լեւոն Արմաթրոնկի գլխաւոր մրցակիցը հանդիսացող Ուլրիխ կը նախատեսուի, որ Թելեքոսի միանայուն մասին իր որոշումը տայ յառաջիկայ շաբթուան ընթացքին:

Հ.Մ.Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԿԱՌՏ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Հ.Մ.Ը.Մ. Լիբանանի Շրջանային Սկսուող Խորհուրդի կազմակերպած 31 Օգոստոս 2002ին վիճակահանութեան վիճակագրութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 7 Սեպտեմբեր 2002ին, Անա Զֆրայայի միջմասնաձիւղային բանակումի խարուկահանդէսի ընթացքին:

ՖՈՒԹՊՈՒԼ. ԵՒՐՈ 2004Ի ԶՏՈՒՄՆԵՐ ՎԱՂԸ՝ ԸԱՅԱՍՏԱՆ - ՈՒՔՐԱՆԻԱ

Միջազգային ֆութպոլի մեկնաբաններու կարծիքով 2004ի Եւրոպայի ֆութպոլի ախոյեանութեան վտու մրցումներու 5րդ խմբակը, որ նաեւ կ'ընդգրկէ Հայաստանը, բարդ կազմ ունի: Թէեւ կարելի է նախատեսել թէ խմբակին առաջին դիրքը բաժին պիտի իյնայ Սպանիոյ, սակայն ամենէին կարելի է թերագնահատել Ուքրանիոյ եւ Յունաստանի կարողականութիւնները: Ինչ կը վերաբերի Հիւսիսային Իրլանտայի եւ Հայաստանի, մեծ ակնկալութիւններ չկան:

Երէկ, Քիեւէն Երեւան ժամանեց Ուքրանիոյ մարզական պատուիրակութիւնը: Այսօր, Արմէնի մարզադաշտի վրայ պիտի մրցին Հայաստանի եւ Ուքրանիոյ երիտասարդական հաւաքականները, իսկ վաղը՝ Երեւանի Հանրապետական մարզադաշտին մարզադաշտին վրայ տեղի պիտի ունենայ Հայաստանի եւ Ուքրանիոյ ազգային հաւաքականներու ճակատումը:

Հայաստանի հաւաքականը 3 օրէ ի վեր կը գտնուի լուրջ նախապատրաստութիւններու մէջ: Հակառակ պատրաստուելու համար ճշդուած սահմանափակ ժամանակին, Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Օսքար Լուֆէկ բարձր գնահատեց հայրենի ֆութպոլիստներու պայքարի ոգին եւ տրամադրութեամբութիւնը: Խօսելով Ուքրանիոյ կազմին մասին, Լուֆէկ ըսաւ՝ «մրցակիցը լուրջ է, պէտք է նկատի առնել նաեւ այն պարագան, որ ուքրանացիները վտու մրցումներու ընթացքին դժուարութեան կը մատնուին եւ այս անգամ պիտի փորձեն այդ երեւոյթէն խուսափիլ»:

ՖՈՒԹՊՈՒԼ. ԻՏԱԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱԿՈՒՄԲՆԵՐ - ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԻ ԿԱՅԱՆՆԵՐ ԱՆՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

Իտալիոյ Սերի Ա.ի ութ ակումբներ մերժած են պատկերասփիւռի արբանեակային կայաններու հետ 53 միլիոն եւրոյի համաձայնագիր մը եւ կը սպառնան, որ եթէ սփռումի իրաւունքներու հարցը անլուծ մնայ, անոնք պիտի չիտաղան առաջին հանգրուանի իրենց մրցումները, որոնք տեղի պիտի ունենան 14 Սեպտեմբերին:


Արդ ինչու է «Քալչիօ» 8 ակումբներ ընդվզած են իրենց մրցումներուն սփռումին համար տրամադրուած գումարին պատճառով, տրուած ըլլալով որ Իտալիոյ բարձրագոյն դասակարգի այլ ակումբներ, ինչպիսին են Եւրոպէսի ու Ա. ՍԵ. Միլանը, առանձնաբար համաձայնագիրներ կ'ընթացնեն պատկերասփիւռի արբանեակային կայաններու հետ եւ անոնցմէ իւրաքանչիւրը կը ստանայ 54 միլիոն եւրո, աւելի մեծ գումար՝ քան դժգոհ 8 ակումբները միասնաբար:

Աւելի նպաստաւոր համաձայնագիր մը կ'ընթացնեն 14 ակումբները՝ Աթալանթա, Պրեշիա Քալչիօ, Քիեւօ Վերոնա, Բոնո Քալչիօ, Էմփոլի, Մոնտենա, Փերուճիա եւ Փիաչենցա կազմեցին միացեալ յանձնաժողով մը:

ԹԵՆԻՍ. ԵՈՒ. ԷՍ. ՕՓԸՆ ՀՈՒԻԹ - ԱԿԱՍԻ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ, ՎԻՆԸՍ ՈՒԻԼԻԸՄՍ Կ'ԱՐՇԱԻԷ

«Եու. Էս. Օփրն»ի տղոց քառորդ անարտականի մրցումներուն, անարտականի Լէյթըն Հուիթ 6-1, 7-6, 4-6, 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց 20րդ դասուած մարտնչի Եուիթ Այնաուին: Աշխարհի թիւ 1 Հուիթ կիսաանարտականին իր դէմ պիտի ունենայ Անտրէ Ակասին, որ 6-7, 6-3, 7-5, 6-3 արդիւնքով տապալեց պիւրոնու Մաքս Միլինին:

Հուիթ - Ակասի մրցումը յատկանշական պիտի ըլլայ քանի մը առումով: Նախ՝ այս երկուքը կը նկատուին «հարտ քրթն»երու (կարծր գետիկով իւր զաւառ տերու) այժմու հզօրագոյն թենիսիստները: Աւելի'ն. Հուիթ 2001ի Եու. Էս. Օփրնի ախոյեան է, իսկ Ակասի նոյն այս մրցաշարը ցարդ շահած է 2 անգամ՝ 1994ին եւ 1999ին: Կիսաանարտականի



Ակասի միւս մրցումը պիտի ըլլայ Կոնկայէ - Շալքէն եւ Ռոտիթ Սամիլիա իւրաքանչիւր յաղթողներուն միջեւ: Աղջկանց քառորդ անարտականի մրցումներուն թիւ 2 դասուած Վինըս Ուիլիամս 6-2, 6-3 արդիւնքով դիւրին յաղթանակ մը արձանագրեց Մոնիքա Սելէշի դէմ: 2000 եւ 2001 տարիներու Եու. Էս. Օփրնի ախոյեանուին կիսաանարտականի պիտի մրցի ֆրանսացի Ամելի Մորեսմոյի դէմ: Կիսաանարտականի միւս մրցումը պիտի ըլլայ Արեւնա Ուիլիամսի եւ Ամելի Մորեսմոյի միջեւ:

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ. ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԺԱՆԹԻՆ ՏԱՊԱԼԵՑ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ

Ինտիանափոլիսի մէջ տեղի ունեցող պասքէթպոլի աշխարհի ախոյեանութեան 2. խմբակի մրցումներուն ծիրէն ներս, երէկ Արժանթինի կապը արձանագրեց վերջին տասնամեակի պասքէթպոլի ամենէն ցնցիչ արդիւնքը, երբ 87-80 արդիւնքով պարտութեան մատնեց Միացեալ Նահանգներու հաւաքականը:

1992էն ի վեր, երբ Էն. Պի. Էյ.ի մարզիկներուն իրաւունք տրուեցաւ միջազգային մրցաշարքներու եւ ախոյեանութիւններու ընթացքին Միացեալ Նահանգները ներկայացնել, ամերիկեան կապը իր 58 միջազգային մրցումներն այլ յաղթանակով անարտած է՝ շահելով 3 ողիմպիական խաղերու ոսկի մետալներ եւ երկու աշխարհի ախոյեանութիւններ:

«Յարգանք եւ պատիւ՝ Արժանթինին», ըսաւ Միացեալ Նահանգներու կապի մարզիչ Ճորճ Քարլ. «Պարտութեանը վերջակէտ»:

Արժանթինի աստղերէն՝ Ֆապրիսիօ Օպէրթօ, որ մրցումին ընթացքին նշանակեց 11 կէտ եւ հաւաքեց 9 ռիպաւոնտ, ըսաւ. «Տակաւին չենք գիտակցիր, թէ ինչ ըրած ենք»:

Ստորեւ՝ կը ներկայացնենք քառորդ անարտականի մրցումներուն յայտագիրը.

- Արժանթին - Պրագիլ
- Փորթօ Ռիքօ - Նիւ Զելանտ
- Գերմանիա - Սպանիա
- Եուկրաինա - Միացեալ Նահանգներ

ՌՈՆԱԼՏՈՅԻ «ԹԻՇԸՐԹ»ՆԵՐԸ ՆՈՅՆԻՍԿ ՄՐՅԱՆԻՇՆԵՐ ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ...

Ռեյալ Մատրիտ արդէն սկսած է Ռոնալտոն գնելով իր կատարած շահարկումին հատուցումները ստանալ: Այսպէս, վերջերս 45 միլիոն եւրոյի (44,9 միլիոն տոլար) Ռեյալ Մատրիտ փոխադրուած Ռոնալտոյի անունը կրող թիւ 11 «թիշըրթ»ները կը վաճառուին մրցանիշային արագութեամբ:

Ռոնալտոյի անունը կրող 70 տոլար արժուութեամբ այս «թիշըրթ»ները վաճառքի դրուեցան Ռեյալ Մատրիտի կեդրոններուն մէջ անցեալ Երկուշաբթի, երբ յայտարարուեցան փոխանցումին առնչուող տեղեկութիւնները եւ անմիջապէս հարիւրաւոր «թիշըրթ»ներ վաճառուեցան:

«Ժամանակ չունեցանք նոյնիսկ «թիշըրթ»ները կախիչ անցնելու» ըսաւ վաճառողներու պատասխանատուն՝ դիտել տալով, որ Երկուշաբթի օրուան Ռեյալ Մատրիտ յաղթանակը Էսփանիոլի վրայ կրնայ ազդած ըլլալ, որ յաջորդ օր 3000 «թիշըրթ»ներ վաճառուին:

Ռեյալ Մատրիտի նախագահ Ֆիորենթինօ Փերեզ վերջերս խոստովանած էր, թէ Ռոնալտոն գնելու որոշումը տրուած էր, որովհետեւ իր ֆութպոլիստի տաղանդին կողքին պրակտիկ աստղը նաեւ ակումբին պիտի բերէր «մարքէթինկի առիթներ»:

ՔԱՐԶԱՅ ... Շարունակուած Ա. ԷՅԸՆ

ճեր, որոնք երբեք չունենի երկուսն պայթումին տարողութիւնը:

ՀԱՍԻՑ ԵԱՐԶԱՅ ԿԸ ՓՐԿՈՒԻ ՄԱՆԱՓՈՐՁԷ ՄԸ

Բրիտանական Պի. Պի. Սի ռատիոկայանին հարողումներէն քաղելով իր տեղեկութիւնները, «Ռոյ-բրոք» լրատու գործակալութիւնը երէկ հաղորդեց, որ Համիտ Քարգայ ազատած է մահափորձէ մը, երբ անձաճօք գինեալներ կրակած են անոր ինքնաշարժին ուղղութեամբ Քանտահարի մէջ: (ՌՈՅԹԸՐԸ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

15 Մարտ 2002ին Ա.Բ.Բ.Ա.ի կեդրոնին մէջ կայացած ցուցահանդէսին գոյացած գումարը ամբողջութեամբ տրամադրուեցաւ Հայաստանի Զրկէժ անձն. Ա.Բ.Բ.Ա.ի կեդրոնացեալ վերանորոգման եւ Ստեփանակերտի մէջ Ա.Բ.Բ.Ա.ի նորաստեղծ կեդրոնի շինարարութեան եւ նորոգութեան:

Առ այդ, կը հրաւիրենք լիքանահայ այն կերպարուեստագետները, որոնք սիրալոյսով կերպով իրենց մասնակցութիւնը բերին յիշեալ ցուցահանդէսին, տօնելու այս յաջողութիւնը, Երկուշաբթի, 9 Սեպտեմբեր 2002ի երկուշաբթի ժամը 7:00ին, Garden Tower պանդոկին մէջ:

Հ. Ս. Գ. Ս. ՄԱՍԼՈՅ ԴԻՒՆ

